

**ՊԱՏՈՒՄԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՆԵՐԺԱՆՐԱՅԻՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Ի. ԲՈՒՆԻՆԻ ԵՎ ՀՐ.  
ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

**Վ. Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

*Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
ԲՖ հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ*

Տևական ժամանակ Իվան Բունինը խորհրդային գրականության մեջ մնաց որպես մերժված գրող: Պատճառները միանգամայն հասկանալի էին. Բունինն ուղղակիորեն չէր ընդունում հեղափոխության բերած ավերածությունները, ազնվական էր, նրա գրականությունը կապված էր ավելի անցյալի հետ, քան ապագայի: Այս ամենը նրան դարձնում էր «օտար»: Թեև Կոնստանդին Ֆեդինը դեռևս 1954-ի Համամիութենական գրողների համագումարում նրան համարում էր երկու դարերի սահմանագծում կանգնած դասական, նրան տեղ հատկացնելով Չեխովի ու Տուրգենևի կողքին, այսուհանդերձ իներցիան շարունակվում էր. նա ավելի մնում էր որպես ընտրյալ ընթերցողի հեղինակ:

Բայց մի բան է հասարակական մտայնությամբ պայմանավորված գրողին ընդունել-չընդունելու հարցը և բոլորովին այլ բան գրական ավանդույթի խնդիրը, որ ծառանում էր մասնավորապես 1960-ականների գրական սերնդի առջև: Ճշմարիտ գրականությունը չէր կարող անտարբեր մնալ այն գրողի հանդեպ, ով միանգամայն նոր բնագծեր էր հաղթահարել գրականության մեջ: Կյանքը իրապես ներկայացնող, իրական խնդիրները հաղթահարող գրագետներն այնքան էլ շատ չէին, բայց կային, որոնք գրում էին ոչ թե այն, ինչ պահանջվում էր, այլ գրում էին այնպես, ինչպես իրենք էին համարում ճիշտ: Դրանք ժամանակի գրականության դեմքը փրկող անհատներն էին, որ «պաշտոնական» գրականությունից տարբերվում էին իրենց արվեստի ներգործուն ուժով, կյանքը ամողջության մեջ տեսնելու ներքին մղումով:

1960-ականների հայ, նաև խորհրդային գրականության մեջ Հր. Մաթևոսյանի հայտնությունը բացառիկ երևույթ էր, ինչը հետագայում Ա. Բիտովը պիտի համարեր մաթևոսյանական, որ մինչ այդ չէր եղել: Բայց Մաթևոսյան հայտնությունը ոչ այնքան մեզ համար ժամանակային խնդիր է, որքան ավելի մտածողության, երևույթները ընկալելու կերպի խնդիր:

Որքան էլ ընդունենք, որ 20-րդ դարի գրականությունը նոր էր երևույթները մեկնաբանելու, կյանքը ներկայացնելու առումով, այսուհանդերձ դա գրականություն էր, որ ձևավորվում կամ առաջ էր գալիս 19-րդ դարի ավանդույթների հիմքի վրա: Բայց ահա թեև քիչ, այնուհանդերձ կային արվեստագետներ, որոնք գրում էին գործեր, որոնք հաղթահարում էին ավանդույթը: Մենք նկատի ունենք 19-րդ դարի ավանդույթը: Դժվար է, ասենք, պատկերացնել, թե ինչպես կարող էր հայ գրականությունը զարգանալ առանց մեր գրականության ավանդական ձեռքբերումների, նաև առանց ռուսական գրականության նվաճումների:

Մաթևոսյանը ոչ պատահականորեն խոսել է մեր գրականության մեծի՝ Թումանյանի, ապա նաև Տոլստոյի մասին: Սա պատահականություն չի կարելի համարել: Անունները պատահական չեն, նրանք ամենաբարձրագույն չափանիշներն են մեկը հայոց գրականության, մյուսը ռուս գրականության համար: Բայց տես, որ ունենալով բարձր ակնածանք այս գրողների հանդեպ, Մաթևոսյանը խոսում է նրանցից տարբերվելու ներքին զգացողության մասին: Այստեղ արդեն խոսքը ոչ այնքան ավանդույթից ձերբազատվելու, որքան այն զարգացնելու, երևույթները նոր հարթության մեջ տեսնելու կարողության կամ անհրաժեշտության մասին է: Ահա այստեղ է, որ Մաթևոսյանը գրականության մեջ հայտնաբերում է նոր ուղի:

Սկզբից ևեթ ասենք, որ ազդեցությունները ամեն դեպքում գրող չեն ստեղծում: Դրանք լավագույն դեպքում հնարավորություն են տալիս բացահայտելու անհատի ներքին հնարավորությունները, իրենց հոգեկից արվեստագետի մեջ նրանք երևույթները նկատում են միանգամայն այլ կերպ: Այստեղ հարազատությունն ավելի հոգևոր բնույթ ունի, քան արենակցական: Նման արվեստագետները գտնում են իրար, հաղորդակցվում են անկախ ժամանակից ու տարածությունից: Այս հոգևոր եղբայրությունը ձևավորում է յուրօրինակ հոգևոր դաշտ, առանց որի շատ է նեղանում սեփական գրականության հոգևոր դաշտը: Ինչևիցե, այն ներքին զգացողությունները, որոնք նաև բնազդով Մաթևոսյանին տարել են համաշխարհային գրականության մեծերը՝ Թումանյան, Տոլստոյ, Ֆոկլներ, Շերվուդ Անդերսեն և այլն, ընդլայնել են նրա գրականության սահմանները: Այս մեծերի շարքում չկա Բունինի անունը: Նրան Մաթևոսյանը չի էլ հիշատակում: Մաթևոսյանը նրան հիշատակում է իր ստեղծագործությունների մեջ: Այսինքն՝ սա խոստովանության ավելի

բարձր՝ գրական աստիճանն է հրապարակախոսության /հարցազրույցի/ համեմատությամբ: Մաթևոսյանը Բունինին անմահացնում է իր գրական տեքստի մեջ: Այսինքն՝ սա ուղղակիորեն խոսում է նրանց հոգևոր կապի մասին: Նման դեպք արձանագրվում է մեկ էլ Ա. Բակունցի կապակցությամբ: Բակունցն էլ է հանգրվանում Մաթևոսյանի երկերի մեջ: Ճիշտ է՝ այստեղ խոսքը ոչ այնքան գրողի, որքան մարդու՝ աշխատավորի կողքին, հողի հետ գործ ունեցող անհատի մասին է, քան գրողի, սակայն դա որևէ նշանակություն չունի: Բունինի պարագայում հիշատակումը չի կապվում մարդկային նկարագրի, անահատականության հետ, խոսքը գրողական մաներայի, ավելի ճիշտ՝ մտածելակերպի, երևույթները բացահայտելու վարպետության, մի խոսքով լեզվամտածողության մասին է: Սա երևույթների ընկալման միանգամայն այլ ձևի՝ բունինյան արտահայտչաձևի մասին է: Ակնարկը շատ թափանցիկ է: Արմեն Մնացականյանը /«Կենդանին և մեռյալը»/ խոսում է ուղղակիորեն անըմբռնելի, ձեռքից դուրս սահող, չշոշափվող երևույթների մասին: Հիշեցնենք, որ խոսքը բիլիարդանոցում խաղից հետո, երբ իր առավելությունը հակառակորդի հանդեպ բացահայտ էր, Եվային պատմում է նկարչուհու, նրա ընկերոջ մասին և այլն: Հետո բաց տեքստով ակնարկում է, որ Բունինն այստեղ մի լավ պատմվածք կգրեր: Սրանից ավելին ասելն անհնար է: Նա ասել է ամեն ինչ: Եթե նախորդ գրականությունը կարևորում էր պատմության ավարտը կամ արդյունքը, ապա Բունինի և Մաթևոսյանի համար կարևորվում է կյանքն ամբողջության մեջ, ընթացքն է կարևոր և ոչ միայն ավարտը, արդյունքը:

Այս ամենը պայմանավորված է աշխարհայացքային նշանակություն ունեցող մոտեցմամբ, որ այս երկու գրողներին դարձնում է հոգեկիցմտերիմ մարդիկ: Նրանք հաղթահարում են ընդունված ավանդական կարգը գրականության մեջ: Նրանք երկուսն էլ գրականության մեջ տիրականորեն իշխող մարդակենտրոն կառույցը փոխարինում են մարդատիեզերակենտրոն կառույցով՝ այստեղից բխող բոլոր հետևանքներով: Սրանով է պայմանավորված նրանց ստեղծագործություններում եվրոպական մոդելի կամ մշակույթի ըստ էության մերժումը հոգուտ Արևելքի: Դժվար է Մաթևոսյանի որևէ երկ առանձնացնել, որտեղ մարդը, թեկուզ և երկրորդական նշանակություն ունեցող, հանդես գա միայնակ, առանց կյանքի հետ ունեցած կենդանի, խորքային իմաստով բովանդակալից կապերի: Մարդը միայնակ չի կարող

իրենով ծածկել ողջ կյանքը, բնությունը, նա միայն առանձին դրվագ է գոյության համընդհանուր երթի մեջ: Հետևապես ներկայացնել մարդուն, նշանակում է ներկայացնել կյանքն ամբողջության մեջ՝ իր բազմաբնույթ կապերով, խորանիստ գծերով, գույներով, հույզերով, խոհերով, կրքերով ու հոգու թրթիռներով: Այս աշխարհայացքային նշանակություն ունեցող մոտեցմամբ է պայմանավորված երկու արվեստագետների երկերում գոյություն ունեցող «գեղագիտական դեդուկցիան»: Ե՛վ Բունինի, և՛ Մաթևոսյանի պարագայում ակնհայտ է ընդհանուրից անհատականը գնալու միտումը: Նրանց երկերում ի հայտ եկող որոշակի ճակատագիրը ենթակա է մնում ընդհանուր կյանքի օրենքներին: Մարդն ավելի շուտ կատարվում է, քան կատարում, նա ավելի շուտ հետևանք է, քան պատճառ: Մաթևոսյանական այս դիտարկումները շոշափում են նրա ստեղծագործության կայացման հիմքերը: Հետևապես առանձին ստեղծագործության ընկալումը մեծ չափով պայմանավորված է նրա ողջ ստեղծագործության կոնտեքստով: Պատահական չէ հերոսների փոխադրումը մի ստեղծագործությունից մյուսը: Նա չի կարող իր հերոսներին կտրել կյանքի ընդհանուր հոսքից:

Երկու գրողների համար էլ Տիեզերքն առաջնային բնույթ ունի: Մարդը շատ փոքր է Մեծ անսահմանության առջև, բայց և միաժամանակ մարդը մեծ է, քանի որ նրա մեջ արտահայտվում է Տիեզերքի ամբողջ գորությունը:

Այս աշխարհայացքային ընդհանրությունների կողքին նկատելի են և որոշակի առնչություններ Բունինի «Գյուղը» և Մաթևոսյանի «Տախը» վիպակների միջև:

Բունինը վկայել է, որ ցանկանում է գրել առանց ձևերի սահմանափակման՝ չհամաձայնելով «գրական կանոններին»<sup>1</sup>: Խոսքը տվյալ պարագայում գեղարվեստական պայմանականությանն է վերաբերում:

Մաթևոսյանը ևս, մասնավորապես «Տախով» հնարավորինս հաղթահարում է գեղարվեստական պայմանականությունը. նպատակը կյանքի սովորական ընթացքը գրականությամբ ամրագրելն է: Կարևորը ոչ այնքան այս կամ այն բնավորությունն է կամ պատմությունը, այլ հայ կյանքի դրվածքը, հայոց կյանքն ընդհանրության մեջ բացահայտելու

---

<sup>1</sup> В большой семье, Смоленск, 1960, стр. 47:

մղումը: Սա կյանքն առանց սահամանափակումների ներկայացնելու ձեռնարկում է, որի արդյունքում ինքնակայացվող ժամանակի հոսքը վերաճում է մարդկային հոգու դիպլեկտիկայի չընդհատվող ընթացքի: Այս դեպքում Մաթևոսյանի հերոսներն ավելի քիչ են ենթակա գեղարվեստական պայմանականության, քան Բունինի հերոսները:

Կրասով եղբայրների՝ կուլակ Տիխոնի և ինքնուս պոետ Կուզմայի ճակատագրերի պատմությամբ հեղինակը վերարտադրում է պատմական իրադարձությունները՝ ռուս-ճապոնական պատերազմ, 1905 թվականի հեղափոխություն, դրան հետևող ռեակցիան... Դեպքերն հիմնականում ներկայացված են Կուզմայի ընկալումների պրիզմայով, որը նաև հեղինակային հայացքի արտահայտիչն է: Նա մտածում է, որ «կորչում է», կորել է նրա կյանքը: Այս եզրահանգումը վերաբերում է ընդհանրապես Դուռնովկային, գյուղի բարոյականությանը: Կարճ ժամանակ դառնում է տոլստոյական, ապա հանդիպելով սոցիալական անարդարությանը՝ հրաժարվում է այդ գաղափարից: Իսկ Տիխոնը, որ քառասունում էլ գեղեցիկ էր, խոսում էր տիրական ու կտրուկ, մի տեսակ շուտ ձերացավ, երբ այլևս կասկած չկար, որ չի կարող հայր լինել, նա կնոջը Չադոնսկ տարավ... Իրեն երբեմն սրբերի ծնողների հետ էր համեմատում, թե ինչպես նրանք երկար ժամանակ երեխա չեն ունենում և այլն: Հետաքրքիր են և կանանց կերպարները՝ իրենց ճակատագրով, տառապանքով: Բնականաբար գրողը մեծ ուշադրություն է դարձնում հեղափոխության վրա և առանձնապես ոգևորված չէ, առանձին դեպքում էլ ատելությամբ է խոսում այն խռովարարների մասին, ովքեր դեմ են ընդունված կարգին և կործանում են հինը:

Որքան էլ մեծ է Բունինի՝ գրականության կանոններից դուրս ստեղծագործելու մղումը, միևնույն է՝ դեպքերը ներքին զարգացման որոշակի միտում ունեն: Պատումի ընտրված ձևը՝ ճանապարհորդությունը, հնարավորություն է տալիս, որքան հնարավոր է, շատ տեսարաններ ու մարդիկ ներգրավել ստեղծագործության մեջ: Ընդհանուր տպավորությունը մռայլ է: Բունինն առօրեական ընթացքի մեջ լավ բան քիչ է տեսնում: Պատահական չէ, որ ժամանակին նրան մեղադրել են կյանքը լուսավոր կողմերով չներկայացնելու համար և «Գյուղը» հակադրել են Մ. Գորկու «Ամառ» գործին, որտեղ կյանքը ներկայացված է վառ գույներով:

Մաթևոսյանի «Տախը» կյանքի ընկալման ավելի լայն պատկեր է, և հնարավոր չէ նրան մեղադրել երևույթները միակողմանիորեն

ներկայացնելու մեղքի մեջ: Նա տեսել է կյանքի և՛ գեղեցիկ, և՛ վատ, և՛ լուսավոր, և՛ սովորոտ կողմերը: Այս առումով վիպակը հիշեցնում է ոչ միայն սև ու սպիտակ գույների համադրությամբ ստեղծված հարուստ դիմանկար-պատմությունների շարք, այլ վառ գույներով ստեղծված կտավ, որտեղ տաք, ներազդուն երանգները վերակերտում են ժամանակի հոգեբանությունն ու կոլորիտն առօրեական ընթացքի մեջ: Բնականաբար Բունինը՝ որպես հեղափոխությունը մերժող անհատ, ավելի շատ ուշադրություն էր դարձնելու այն մեծ հեղաբեկումներին, որոնք տեղի էին ունենում ռուսական մեծ տերության սահմաններում, Մաթևոսյանին հուզում էին այս ամենի արդյունքում ստեղծված ծանր կացությունը, որ խորացավ պատերազմի հետևանքով և հնարավորինս հաշմեց գյուղական համայնքները, իսկ նոր տնտեսավարման քաղաքականությունը մարդուց խլեց ինքնուրույնությունն ու նրան դարձրեց որոշումներ կատարող: Մաթևոսյանը զուտ պատմության առումով ավելի մեծ հնարավորություն էր ստանում ժամանակն իմաստավորելու համար /հեղափոխությունից հետո/, քան Բունինը: Այս ամենի արդյունքում զուտ քաղաքական կողմնորոշումը /Բունինի մոտ/ մղվում էր հետին պլան, որովհետև Մաթևոսյանին հուզում էին գոյաբանական խնդիրները, քանի որ մնացած պարտադրանքները ժամանակի կողմից նրա համար էական լինել չէին կարող, ժամանակավոր արժեքները խաբուսիկ են, ոչ տևական՝ կայուն, հավերժական արժեքների կողքին:

Բայց եթե նկատենք, որ Տիխոնի համար մեծ ցավ է երեխա չունենալը, նույնը՝ Ռոստոմի համար, և այդ ընթացքում նրանց ձեռնարկումները՝ մեկը կնոջը տանում է Զադոնսկ, մյուսը՝ Արդվի՝ աղբյուրից ջուր խմելու, Տիխոնն իրեն սրբերի ծնողների հետ է համեմատում, նախագահը Ռոստոմին՝ «հայր, որդի ու սուրբ հոգի» է կնքում, Տիխոնը գերեզմանաքարին գրվածը կեղծիք է համարում, Ռոստոմն ուղղակի թքում է Լեռնիկ Արզումանյանի հիշատակի վրա, Կուզման ինքնուս բանաստեղծ է, Ռոստոմը երգ է հորինել, մարդիկ երգում են, Կուզման աստիճանաբար ճանաչում է ռուս դասականներին, Ռոստոմի հետ մշտապես Թումանյանն է և այլն, ապա դա նշանակում է, որ Մաթևոսյանը չէր կարող ծանոթ չլինել Բունինի երկին: Բայց այս արտաքին նշանների կողքին կան առավել էական հարցեր, որ անհանգստացրել են այս երկու մեծերին: Մաթևոսյանը ոչ թե «Տախը» գրելիս հանգեց այդ գաղափարներին, այլ իր անցած ճանապարհով,

գրականությամբ նախանշելով անցնելիք ուղին, գրական ճանապահին «հանդիպեց» մեծ գրողին, որին անհանգստացրել էին նույնատիպ խնդիրները: Դրանցից առաջինը Մաթևոսյանի համար գոյաբանական խնդիրներն էին, որոնք Բունինը խորացնելու անհրաժեշտություն չի ունեցել: Վերջինս տեսավ, որ հեղափոխությամբ ժողովրդի վիճակը չլավացավ: Մաթևոսյանի համար խնդիրը ձեռք է բերում առավել գլոբալ բնույթ: Ոչ հեղափոխությունը, ոչ էլ պատերազմը, ոչ էլ հետագայի արտաքուստ խաղաղ ընթացքը չփոխեց մարդուն: Միայն առաջացած նոր իրադրությունն ու հանգամանքները առաջ բերեցին կամ հետ տարան այս կամ այն մարդկանց, բայց նրանք իրենց բնույթով մնացին նույնը կամ գրեթե նույնը: Եթե Վրացոնք իրենց անկայուն վարքով սկսեցին ղեկավարել կոլխոզային կարգերը, ապա դրանից նրանք չդարձան ավելի ապահով ու կանխատեսելի: Պատմության խորքերում արդեն նրանց ճակատին գրված էր իրենց տեսակի լինելիք ճակատագիրը: Ռոստոմը հոգեկան անկման պահին հիշում է Մելքանց մեծին, որից խորհրդի, մի դիտողության մի ակնարկի կարիքն ունի, այդ ինչպե՞ս է պատահում, որ մարդը կարողանում է ամեն կարգի, հանկարծահաս վտանգները հաղթահարել, խոսել մեծ ժամանակի հետ՝ առօրյա խնդիրները ենթարկելով տևականությանը, իսկ մյուսներն այդպես էլ մնում են որպես խաբված տանտերեր, այդ ինչպե՞ս է, որ Վաթնանց տերտերը հասկացավ, թե որքան արագ ու վճռական պիտի լինել օրհասական պահին և տան մեջ փակվելու փոխարեն հարկ է արագորեն հեղեղի դեմն առնել, իսկ մյուսները դա չհասկացան: Եվ այս ամենը չի կարող տեղակայվել որոշակի ժամանակի մեջ, դրանք խնդիրներ են, որ վեր են ամեն կարգի քաղաքական կացությունից, քանի որ Մաթևոսյան գրողի առջև հառնել են մեծ, դեպի հավերժություն գնացող ժամանակն ու մարդը: Ինչպե՞ս է գոյատևելու մարդը, եթե ոչնչացնում է բնությունը, ասել է թե սեփական տունը, ինչպե՞ս է գոյատևելու մարդը, եթե բարոյական վարքագիծ դրսևորելը սոսկ թատրոն է համարվում, ինչպե՞ս ապրել հարևանի հետ, եթե երկուստեք թշնամի են, ինչպե՞ս պիտի ապրել, երբ տունը կործանվում է, իսկ դրանից հեռացած ու մի պահ այնտեղ հայտնված անառակ զավակը հեռուններից միայն հոգու աղքատություն ու անբարոյական վարք է բերել: Ժողովուրդն ինքն իր մեջից կարողանալո՞ւ է հրապարակ հանել երկրի տիրոջը, որ ապահով, ավելի անվտանգ դարձնի սերունդների երթը, թե՞ շարունակելու է արհամարհել նրան՝ սեփական հոգեբանությանը բնորոշ

գնահատողական վերաբերմունքով մերժելով նրա տեսակի գոյությունը, նրա շարունակվելու հնարավորությունն ընդհանրապես՝ նրան բնութագրելով որպես «տախի»՝ կռտած խոզի, որ՝ այլևս «անելիք» չունի և պետք է լքի հրապարակը, քանի որ մարդկային այդ տեսակն այլևս «մերժված» է: Սրանք հարցեր են, որ վերժամանակային բնույթ ունեն:

Եթե այս հարցադրումը Մաթևոսյանի վիպակում առանցքային նշանակություն ունի, և անհատի ու միջավայրի փոխհարաբերության խնդիրն ավիշավորում է ողջ երկը, և դրա արդյունքում գրողը հոգեբանորեն է վերաիմաստավորում երևույթը, միջավայրը լավի առջև գազազում, վատի առաջ խաղաղվում է, Թումանյանի եղբոր՝ Ռոստոմի մասին պատմությունների ծավալումը արվել է նրա վեհ բարձրությանը քար նետելու, լուսավոր կերպարը նսեմացնելու միտումով, ապա Բունինի վիպակում երևույթն ավելի հրապարակախոսական բնույթ ունի. «Պուշկինին սպանեցին, Լերմոնտովին սպանեցին, Պիսարևին խեղդեցին, Ռիլենին ջարդեցին, Դոստոևսկուն քարշ տվեցին գնդակահարության, Գոգոլին խելագարեցրին... Իսկ Շևչենկոն, իսկ Պոլեժա՞նը»<sup>1</sup>:

Մաթևոսյանի ողջ ստեղծագործությունը կառուցված է այնպես, որ հերոսներն իրենց էությանը ներհյուսված են միջավայրին, դրանց միջև եղած կապը փոխադարձ բնույթ ունի, և գրողը երբեք էլ այն կարծիքին չէ, թե միջավայրն անխուսափելիորեն ոչնչացնելու է անհատին, Մաթևոսյանի համար գերակա խնդիր է մնում անհատի բարոյական պատասխանատվության խնդիրը միջավայրի, անցյալի հիշատակների, ժողովրդի ճակատագրի, երկրի հանդեպ: Ընդհանուրի շահի մեջ սեփական շահը տեսնող երկրի տիրոջ զգացողություն ու վարք պիտի ունենալ, հակառակ դեպքում կործանումը կդառնա անխուսափելի:

Մաթևոսյանը ևս ընտրել է ճանապարհորդությունը: Դեռևս «Ալխոյից» սկսած՝ երևույթների մատուցման այս ձևը նախընտրելի է գրողի համար: Բայց եթե Բունինի «Գյուղը» մասին գրականություն» է, որտեղ պատմվում է ինչ-որ բանի մասին, ապա «Տախը» ինքնախոստովանություն է: Կենտրոնում Ռոստոմն է, բայց մնացած բնավորությունները ևս, ներկայում գործող և անցյալում եղած, իմաստավորվում են խորը բացահայտումներով, հոգեբանությամբ, մղումներով: Առանձին դեպքերում

<sup>1</sup> И. А. Бунин, Повести и рассказы, М. 1982, с.103:

գրողը նպատակադիր կերպով թուլացնում է արտաքին գործողությունը՝ կարևորելով ասոցիատիվ մտածողության հոսքը, արդյունքում ստացվում է լայն պատկեր՝ անցյալի ու ներկայի համադրությամբ, հերոսի խոհերով, ապրումներով, ենթագիտակցականից եկող մղումներով, մարդկային տարբեր տիպերով, կենցաղով, սովորականի դրամատիզմով, գեղեցկության հրճվանքով ու նաև առօրեականի ողբերգականությամբ:

Չի կարելի ասել, թե երկը միայն մեկ հերոսի ինքնախոստովանությունն է, կան հերոսներ, որոնք ևս սեփական հայացքով են դիտում երևույթները, վերլուծում դրանք: Իսկ առանձին պատմություններն այս կամ այն կերպ առնչվում են հիմնական հերոսին:

Որպես պատումի կառուցվածքային առանձնահատկություն՝ հարկ է նշել սովորականի, առօրեականի և դրա բնական ընթացքի միջև եղած համապատասխանությունը, որ ստեղծում է գրողը: Պահպանվում է ֆաբուլան, բայց կարևորվում է և սյուժեի զարգացումը, որ ժամանակային ու բովանդակային ավելի մեծ տարողություն ունի: Սա արդեն այլ խոսակցության նյութ է:

Ընդհանրացնենք: Մեծ գրողները գրական ոգու թագավորության մեջ մշտապես գտնում են իրար, նրանց միջև եղած կապն արյունակցական չէ, այլ հոգեկան: Այն վերժամանակային բնույթ ունի: Բայց դա չի նշանակում, որ ժամանակը բացակայում է նրանց գործերում: Բունինին անհանգստացրել են այլ խնդիրներ, Մաթևոսյանը բացահայտել է կյանքի բերած նոր իրողությունները, այս իմաստով նրանք տարբեր են: Ընդհանրությունները դրսևորվում են երևույթների ընդգրկման, դրանց մեկնաբանելու կերպի, նաև աշխարհընկալման որոշակի ուղղվածության մեջ:

***Քանալի բառեր՝** ժանր, ավանդույթ, սահմանագիծ, ընկալման կերպ, չափանիշ, հոգևոր դաշտ, աշխարհայացք, գոյության համընդհանուր երթ, կոնտեքստ, գեղարվեստական պայմանականություն:*

## **GENRE FEATURES TO RENDER THE NARRATION IN I. BUNIN'S AND HR. MATEVOSIAN'S WORKS**

**V. R. GRIGORYAN**

*Doctor of Philology, Professor*

*The Head of the Chair of Armenian Language and Literature*

The article discusses the peculiarities and common features in the stories of Hrant Matevosyan and Ivan Bunin. Literature of the 20th century, which is based on the traditions of 19th century literature, attached special importance to the result of history and events, which assumed its structural form of narration. The whole course of life and events and not just the end was important for Bunin and Matevosyan. The world created by them has a character-man in the center of the universe.

## **ВНУТРИЖАНРОВЫЕ ОСОБЕННОСТИ ПОДАЧИ РАССКАЗА В ПРОИЗВЕДЕНИЯХ И. БУНИНА И Г. МАТЕВОСЯНА**

**В. Р. ГРИГОРЯН**

*Доктор филологических наук, профессор,  
Заведующий кафедрой армянского языка и литературы*

В статье рассматриваются особенности и общие черты повестей Гранта Матевосяна и Ивана Бунина. Литература 20-го века, которая основывалась на традициях литературы 19-го века, особое значение придавала результатам истории, событий, что предполагало свою структурную форму повествования. Для Бунина и Матевосяна был важен весь ход жизни, событий, а не только конец. Их созданный мир имеет характер - человек центр вселенного.